



ՕՐԱԳԻՒԹ

ՅԵՐԱՅԻՆԻՒՅԻՆ, ԲՈՎՈՎՄԱՐԴԻՆԻ, ՏԵՏԵՄԱԿԻՆԻ

ԵՒ

ԲՈՇԿԻՆ ԳԻՏԵԼԵՐԸ

Դ. ՏԱՐԻ, ԹԻՒ 15.

1846

ՕԳՈՍՏՈՍԻ 1.

ԲԱՐՈՑԱԿԱՆ

ԲԱՐՈՑԱԿԱՆ ԱՌԱՋՆԵՐ

Պիծք չէ ուրիշը շուտով դատել,
ոչ աղէկութեանը՝ ոչ գէշութեանը
համար :

Ըատ անգամ լ'ստուած անիրաւ
պիտի ըլլար՝ թէ որ մեր աղօթքին
մտիկ ընէր :

Խագաւոր ըլլալու մարդ չէ՝ ով որ
իր վրայ չթագաւորեր :

Խենթ կը սեպուի ով որ ուրիշի
խենթ ու խելաւ խօսքերը կ'առնէ
կ'անցնի :

Խածուկ բան մը չկայ՝ որ ժամա-
նակով չյայտնուի :

Խնչ որ ժամանակով կը շինուի, ժա-
մանակով ալ կը փձանայ :

Խաղաղութիւնը առատութիւն կը
բերէ :

Խարդս բոլոր կեանքը մեծամեծ
բաներ մտածելով կ'անցընէ, և ա-
ռանց ան խորհուրդներն՝ ի գործ դնե-
լու կը մեռնի :

Խարդուս խօսքէն իր սիրար կը
յայտնուի :

Ըատ անգամ ան բաները՝ որոնց
վրայ անհոգ կ'ըլլանք՝ մեր երջանկու-

թեանը պատճառ կ'ըլլան :

Ղարձքի մը յաջողութիւնը ամէն
աշխատութեանց վարձքն է :

Խնկարելի է մեր պարտքերը կատա-
րել երբոր կ'ուզենք մեր ուզածին
հետեւիլ :

Ով որ անիրաւութիւն կը սերմա-
նէ, ատելութիւն ու վրէժխնդրու-
թիւն կը հնձէ :

Պատմութիւն ուրիշ բան չէ, բայց
եթէ նոյն գիպուածներու նորոգու-
թիւն ու փոփոխութիւն :

Խխտը ատելով՝ առաքինութիւնը
սիրելու կը զօրանանք :

Լ'ստուած կ'ուզէ որ մեզի տուած
հարստութեամբը մեր նմաններուն
օգնենք :

Խելացի մարդը՝ քիչ կը յուսայ, և
ամենեին չյուսահատիր :

Լյրբոր առատութեան մէջ կը լ-
ղանք, ուրիշներու կարօտութիւնը
կը մոռնանք :

Խնքզինքը ծախողէն աւելի խեղջ
գերի չկայ :

Խահը զմարդիկ իրարմէ կը զատէ
15

ու կը միացընէ :

Ի՞արեգործութեան՝ եռանդուն շընորհակալութենէ զատ՝ ուրիշ կերպով չենք կրնար հատուցմունք ընել :

Ո՞արդս իր երջանկութիւնը կը շատցընէ՝ բարեկամին ալ անկէ բաժին հանելով :

Ո՞եր սուրբ հաւատքը կը պատուիրէ՝ որ միայն բարեգործութեամբ մեր թշնամիներէն վրէժ առնենք :

Ո՞էկ բան մը մեր աչքը այնպէս ցուարձացըներ, ինչպէս անոնք՝ որոնց բարիք ըրեր ենք :

Ի՞նխոչեմ մարդը կնիքը բակուած նամակ կը նմանի . ով որ ուզէ կրնայ կարդալ :

Ո՞ստուած ոմանց հարկաւորը կուտայ ապրելու համար, ոմանց ալ մըխիթարութիւն՝ աղէկ մեռնելու համար :

Ո՞իայն առաքինութեամբ մարդս իր վիճակին մէջ երջանիկ կ'ըլլայ ու առաջ կ'երթայ :

Խաղցողներու բաղդը իրենց ձգած քուէներուն պէս շուտ շուտ կը փոխուի :

Ովոր Ո՞ստուծմէ կը վախնայ, միայն անկէ կը վախնայ :

Ո՞եր վախովը վրանիս գալու ձախորդութիւնը կը շուտցընենք :

Ո՞արդս ի՞նչպէս կրնայ մեռածներէն օրինակ առնել, երբոր կենդանեաց ըրածն ալ տեսնելու աչք չունի :

Լայճակը ամենէն բարձր ծառերը կը զարնէ :

Ի՞արկութեան ժամանակ զուրցած խօսքերնիս՝ խիստ քիչ անգամ կ'ըլլայ որ ետքէն մեզի ցաւ չտան :

Դառւլութիւնն ու դատարկութիւնը խեղձութեան առաջնորդներն են :

Ո՞րդիան սիրոյ օրէնակ :

Ո՞ւտսակասար կղզւոյն վրայ գըրուած յօդուածի մը մէջ աս սրտաշարժ դիպուածը կը պատմուի, որ մեր Ի՞ազմավէպը կարդացող պատանինե-

րուն կրնայ օգտակար ըլլալ :

Այս կղզիիս վերջի թագաւորը Ուտամա, որ 1810^ն տասնըութը տարուան թագաւորեց, շատ խելացի և ուսումնասէր մարդ էր: Իր պղտիկութեան ատեն ըրած մէկ գործքէն կը նայ իմացուիլ իր բարի սիրտը : Ուտաման իր մօրը վրայ շատ սէր ունէր: ուստի խիստ տրտմեցաւ երբոր իր հայրը փուժ բանի մը համար դուրս ըրաւ իր թագուհին: Խրկորդդ օրը երբոր թագաւորը ուրիշ տեղ գնացեր էր, տղան գնաց վառեկ՝ մը բերաւ ու աթուի մը ոտքին կապեց: Երբոր հայրը տուն դարձաւ ու խեղճ վառեկը տեսաւ որ կապուած տեղը կը չարչարուի, հարցուց տղուն թէ ի՞նչ բան է. “ Բան չկայ, ըստ տղան: պղտի վառեկ մըն է որ իր մօրմէն բաժնուելուն վրայ կը ցաւի,, : Ուտագաւորը իմացաւ տղուն միտքը, ու մէկէն անօրը նորէն տուն դարձուց Ուտամային մայրը :

Խիստալու վրայ տանի ճը գէտելիք :

Չկաթ անանկ զուարձալի կարողութիւն մը մտաց, ինչպէս գիտնալը՝ խելացի խօսքերով ու պատմութիւններով ուրիշներուն ծիծաղը շարժել: Ոչ խաղ և ոչ ուրիշ զբօսանքներ այնպէս կը զուարձացընեն ընկերութիւնը, ինչպէս մէկ ուրախ ու պարկեշտ կերպով խնտացընող մարդ մը :

Ո՞արդս խնտալ ու խնտացընել կը սիրէ. ու երբոր աս գեղեցիկ ու խելացի կերպովը չկընար, կը սկսի ափեղցրփեղ խօսքերով, կամ ձեռքի կատակներով, կամ ուրիշի պակսութեանցընմանութիւնը՝ ընելով խընտալ ու խնտացընել, որ անպատշաճ ու մխասակար բաներ են: Ի՞նչ զարմանալի բան է՝ երբոր մէկ ընկերութեան մը մէջ մէկը իր հանձարեղ

1. Փէկէմ:

2. Թագէմիք: